# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 7 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորչի եկեղեցիին մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Խաղողօրհնէք»ի արարողութիւն, նախագահութեամբ Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոսի։

● Կիր. 14 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Արշէն Աբղ. Այվազեան։

● Բշ. 15 Օգոստ.— Այսօր սկսաւ Ս. Կոյսի Վերափոխման տօնը կանխող ամէնօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը, Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։

● Կիր. 21 Օգոստ.— Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց եւ Գ. Տարեդարձ Գահակալութեան Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարքին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան։

● Ուր. 26 Օգոստ.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածնի մատրան մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.։

● Շբ. 27 Օգոստ.— Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեան։

— Կէսօրէ ետք ժամը 4ին, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.ի, Միաբանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանդէս նախատօնակը։

— Իրիկնադէմին նոյն տաճարին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»ի եւ Հսկման կարգեր ու ապա գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ։ Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեան. Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 10–ին։

● Կիր. 28 Օգոստ.— ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ: Առաւօտեան ժամը 9ին, գլխաւորութեամբ Լուսարարապետ եւ Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի ձորը, ու ժամը 10ին, Յունաց հանդիսաւոր Ս. Պատարագէն ետք (այս տարի մեր եւ Յունաց տօները միասին զուգադիպած ըլլալուն) «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Լուսարարապետ Սրբազանը եւ քարոզեց օրուայ տօնին շուրջ, խօսելով Ս. Կոյսին մասին ինչպէս նաեւ շեշտելով մայրութեան գաղափարին վեհութիւնն ու կանացի առաքինութիւնները։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Անդաստան»։ Արարողութիւններ աւարտեցան կէսօրը անց։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Անդաստան», երեկոյեան ժամերգութիւն եւ Նախատօնակ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.։

● Բշ. 29 Օգոստ.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան։ Ս. Պատարագէն ետք, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի գլխաւորութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ, ապա գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրք.ի շիրմին վրայ եւ հուսկ ուրեմն Զամ Թաղի հասարակաց գերեզմանատան մէջ։

digitised by A.R.A.R.@